

05.05.15թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի (այսուհետև՝ կանոնակարգ), 49-րդ կետի, հրապարակում են «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի կողմից հրապարակված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն:

2014թ-ի ընթացքում «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն, համաձայն կանոնակարգի, ներկայացրել է էական տեղեկատվություններ ընդհանուր թվով 6 հատ, ինչպես նաև 1 տարեկան ու 1 կիսամյակային հաշվետվություններ (կից կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով), որոնք բոլորը տեղադրված են Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

08.04.14թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

2014թ-ի ապրիլի 4-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2014թ-ի ապրիլի 14-ին, ժամը 12:00-ին Երևան, Ճիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Ճիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Ընկերության գործադիր մարմնում տեղի ունեցան փոփոխություններ՝ մասնավորապես «ԹՄ աուդիտ» ՓԲԸ-ի կողմից լիազորված Ընկերության ֆինանսական տնօրեն Ռուդիկ Պողոսյանը դադարեցրեց լիազորությունները և ազատվեց զբաղեցրած պաշտոնից: «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն նշանակվեց «ԹՄ աուդիտ» ՓԲԸ-ի կողմից լիազորված Սերգեյ Դուրախանյանը (մասնագիտությամբ, տնտեսագետ հաշվապահ Է, ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը):
2. Ընկերության 2014 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման համար աուդիտորական երեք թեկնածու ընկերություններից (Ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ, Աուդիտ Սերվիս ՍՊԸ և Սօս Աուդիտ ՍՊԸ) որոշվեց ընտրել Ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ-ն և այն ներկայացնել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը:

15.04.14թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ եական տեղեկությունը

2014թ-ի ապրիլի 14-ին տեղի է ունեցել Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով, որի ընթացքում որոշում ընդունվեց հաստատել «Ֆինտեխ Աուդիտ» ՓԲԸ-ի թեկնածությունը՝ 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտի իրականացման համար:

05.05.14թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի (այսուհետև՝ կանոնակարգ), 49-րդ կետի, հրապարակում եմ «Շեն Յոլդինգ» ՓԲԸ-ի կողմից հրապարակված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն

2013թ-ի ընթացքում «Շեն Յոլդինգ» ՓԲԸ-ն համաձայն կանոնակարգի ներկայացրել է էական տեղեկատվություններ ընդհանուր թվով 17 հատ, տարեկան ու կիսամյակային հաշվետվություններ՝ յուրաքանչյուրը՝ 1 հատ (կից կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով), ինչպես նաև 2013թ.-ի նոյեմբերին թողարկված պարտատոմսերի թողարկման ազդագիրը, որոնք բոլորը տեղադրված են Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

20.06.14թ.

համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

2014թ. հունիսի 19-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2014թ-ի հունիսի 30-ին, ժամը 16:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Որոշվել է տարեկան ժողովի օրակարգը, որով նաև հաստատման է ներկայացվել շահաբաժինների վճարման կարգը:

12.09.2014

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի,
բացահայտում են «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝**

Հայտնում են, որ 2014թ-ի սեպտեմբերի 1-ից Ամերիաբանկ ՓԲԸ-ն հանդիսանում է Շեն Հոլդինգ ՓԲԸ-ի պարտատոմսերի շուկայի ստեղծող (մարքեթ - մեյքեր), ինչպես նաև արդեն Բորսայում իրականացնում է երկկողմանի գնանշումներ:

10.12.2014

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը**

2014թ-ի դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում որոշվեց կնքել պայմանագիր Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) հետ՝ վերջինիս կողմից տրամադրվող վարկի (վերաֆինանսավորում և ֆինանսավորում) և դրա դիմաց գրավադրվող ակտիվների վերաբերյալ: Վերաֆինանսավորումն իրականացվում է տոկոսադրույքների նվազեցման նպատակով, իսկ ֆինանսավորումն ուղղվելու է գիպսոնիտի արտադրության ընդլայնման և արտադրական այլ ենթակառուցվածքների զարգացմանը: Այս պրոյեկտը իրականացվում է «Էյչ Էս Բի Սի» Բանկ Հայաստան ՓԲԸ-ի հետ համատեղ: Պրոյեկտի ընդհանուր գումարը կազմում է 23,8 մլն ԱՄՆ դոլար, որից վերաֆինանսավորման մասը կազմում է 12,3 մլն. ԱՄՆ դոլար: